

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՅԱՆԵ ՌՈՒԲԻԿԻ ԹՈՎԱՄԱՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ
ՋԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂԱՍԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Նելլի Հայկազի Շահնազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Ալբերտի Սարգսյան

տնտեսագիտության թեկնածու
Արթուր Ռաֆիկի Թամազյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. նոյեմբերի 27-ին, ժամը 14⁰⁰-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է՝ 2014թ. հոկտեմբերի 27-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, տ.գ.դ., պրոֆ.



Ս.Ա. Գևորգյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում շուկայական տնտեսությանն անցման ժամանակաշրջանից ի վեր իրականացվող բարեփոխումների կարևորագույն ոլորտներից է զբոսաշրջությունը, որի զարգացումը պահանջում է էական փոփոխություններ մի շարք բնագավառներում: ՀՀ-ում զբոսաշրջությունը հայտարարվել է տնտեսության զերակա ոլորտ: Զբոսաշրջության հիմնական տեսակների մեջ իր ուրույն տեղն ունի առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը, որի դեպքում մարդիկ այցելում են առողջարաններ բուժման, կենսական ուժերի վերականգնման, հանգստի նպատակով:

Հայաստանն ունի առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության կազմակերպման զգալի ներուժ: Հայաստանում կան 10 կուրորտային գոտիներ, որոնք ունեն բոլոր բնական բուժիչ ռեսուրսները: ՀՀ կուրորտների բուժառողջարարական ռեսուրսներն իրենց հատկություններով համեմատվում են հանրահայտ միջազգային կուրորտների հետ: Հայաստանը դեռևս խորհրդային տարիներին եղել է տարածաշրջանային առողջարանային կենտրոն: Վերջին տարիներին, սակայն, այցելուների ընդհանուր թիվը կտրուկ նվազել է, առողջարանները գործում են ոչ լրիվ հզորությամբ, բացի այդ ոչ բոլոր առողջարաններն են գտնվում բարվոք վիճակում: Ընդ որում պետք է նշել, որ ոչ բոլոր կուրորտային գոտիներում կան առողջարաններ, իսկ եղածների մի մասը գործում է միայն առողջարանային հանգստի բարձր սեգմենտի՝ ամռան ընթացքում: Բացի այդ, թերի է ոլորտի օրենսդրական դաշտը, վիճակագրական հաշվառման գործընթացը, մարքեթինգային գործունեությունը, չկան ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ խթաններ, ոլորտի զարգացման հայեցակարգ, ռազմավարական ծրագրեր, և այլն: Չկան նաև առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման վերաբերյալ կատարված գիտական հետազոտություններ: Այդ իսկ պատճառով էլ նախ անհրաժեշտ է ուսումնասիրել ոլորտի զարգացման տեսամեթոդական հարցերը, ոլորտի կառավարման ու զարգացման միջազգային և հայրենական փորձը, վերլուծել ոլորտի արդի վիճակը և զարգացման միտումները ՀՀ-ում, որոնք էլ էական լինի կղաճկան առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման խնդիրների առաջադրման և դրանց լուծման հիմնական ուղիների մշակման համար: Անհրաժեշտ է իրականացնել բարեփոխումներ մի շարք ուղղություններով՝ երկրում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը միջազգային մակարդակին համապատասխան զարգացնելու նպատակով: Սույն վերը նշված մի շարք խնդիրներով էլ պայմանավորված է սույն հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսությունը նպատակը ՀՀ-

ու՛մ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտի արդի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրության և վերլուծության հիման վրա դրա զարգացման համար անհրաժեշտ տեսական, գործնական և հայեցակարգային հիմքերի մշակումն է:

Առաջադրված նպատակին հասնելու համար կարևորվել են լուծումներ պահանջող հետևյալ **խնդիրները**.

- ✓ ուսումնասիրել զբոսաշրջության և առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման տեսամեթոդական հիմքերը և մեխանիզմները,
- ✓ հետազոտել միջազգային պրակտիկայում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման արդի միտումներն ու առանձնահատկությունները,
- ✓ գնահատել ՀՀ-ում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման ներուժային հնարավորությունները,
- ✓ վերլուծել առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտը կարգավորող օրենսդրափրավական դաշտը՝ բարելավման ուղղությունների բացահայտման նպատակով,
- ✓ բացահայտել առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտում ներդրումների իրականացման հիմնական աղբյուրները և ուղղությունները,
- ✓ վերլուծել առողջարանային հանգստի գնային քաղաքականության արդյունավետությունը,
- ✓ բացահայտել առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար մարքեթինգային գործունեության իրականացման հիմնական ուղիները:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտն է՝ իրեն բնորոշ բնութագրիչներով և առանձնահատկություններով, իսկ առարկան առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների բացահայտումն է:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության տեսական և մեթոդական հարցերին նվիրված օտարերկրյա և հայրենական գիտնականների աշխատություններն ու հողվածները:

Հետազոտության տեղեկատվական հիմքը ներառում է ՀՀ ԱՎԾ-ի տրամադրած տվյալները, ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության և տարածքային տնտեսական զարգացման վարչության, ՀՀ Առողջապահության նախարարության լիցենզավորման վարչության և «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության

գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի, ինչպես նաև առողջարանների տրամադրած կամ նրանց կողմից հրապարակած տեղեկությունները, ՀՀ և այլ երկրների՝ ոլորտին վերաբերող օրենքները և նորմատիվ իրավական ակտերը, ՀՀ կառավարության և պետական կառավարման մարմինների ծրագրերը, ինչպես նաև Ջրոսաշրջության համաշխարհային կազմակերպության և ոլորտի այլ միջազգային կազմակերպությունների պաշտոնական տեղեկագրերը: Օգտագործվել են նաև մասնուլում պարբերաբար հրատարակվող տեղեկություններ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման և խմբավորման, վերլուծության և համադրության, տեսական և գործնական նյութի պատմական և տրամաբանական վերլուծությունների զուգակցման, համեմատական վերլուծության, համադրությունների և դատողությունների, միկրո և մակրո վերլուծության, մաթեմատիկական և վիճակագրական վերլուծության, SWOT վերլուծության, հարցաթերթիկային հարցման և հարցազրույցի, սոցիոլոգիական դիտման և գրաֆիկական մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը և արդյունքները: Հետազոտության արդյունքում ստացվել են տեսական, մեթոդաբանական և գործնական ուղղվածություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության տեսամեթոդական բազայի և ոլորտի զարգացման արդի միտումների ու առանձնահատկությունների վերլուծության արդյունքում տրվել է առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության նոր, ավելի ընդգրկուն բնորոշում, որի պարագայում այն դիտարկվել է առողջարանային բուժման և հանգստի կազմակերպման ծառայությունների մատուցման տեսանկյունից, ինչը թույլ կտա ընդլայնել զբոսաշրջային ծառայությունների շուկան՝ բավարարելով պահանջմունքների ավելի լայն շրջանակ:
- ՀՀ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտի SWOT վերլուծության արդյունքների հիման վրա մշակվել և առաջարկվել է առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հայեցակարգ՝ որպես մրցունակ կուրորտային համալիրի ձևավորման և առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման առաջնությունները հեռանկարային ուղղությունների և գերակայությունների՝ գիտականորեն հիմնավորված համալիր ծրագիր:
- Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման կազմակերպամեթոդական ապահովման նպատակով առաջարկվել և հիմնավորվել է «Հայաստանի առողջարանների միություն» ոչ առևտրային կազմակերպության ձևավորումը, մշակվել են դրա նպատակները, գործառույթները, ֆինանսավորման մեխանիզմները, կառավարման համակարգը:

- Մշակվել և հիմնավորվել են ԳԳ-ում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտը կարգավորող օրենսդրափրավական դաշտի բարելավման նպատակով սկզբունքային մոտեցումներ՝ ուղղված զբոսաշրջային հարկի, բնական բուժիչ ռեսուրսների և առողջարանային-վերականգնողական գոտիների, առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության և այդ ոլորտում ներդրումային գործունեության մասին օրենքների ընդունմանը, մշակվել են դրանց հիմնական դրույթները:

Ֆետագոտության գործնական շանակությունը և արդյունքների փորձարկումը: Ֆետագոտության արդյունքները կարող են օգտագործվել զբոսաշրջության ոլորտի պետական կառավարման մարմինների կողմից՝ զբոսաշրջության զարգացման պետական քաղաքականության, առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հայեցակարգի, ռազմավարական ծրագրերի մշակման, համապատասխան օրենսդրական դաշտի բարելավման, մարքեթինգային գործունեության ծրագրերի մշակման և իրականացման, առողջարանների կողմից՝ զնային քաղաքականության բարեփոխման, մարքեթինգային գործունեության բարելավման, առողջարանների միության ձևավորման, ինչպես նաև բուհերի կողմից՝ կուրորտային զբոսաշրջության ոլորտի մասնագետներ պատրաստելու նպատակով:

Ատենախոսության հիմնական դրույթները գեկուցվել և քննարկվել են ԳՊՏԳ «Կառավարման» և «Հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման» ամբիոնների համատեղ նիստում, ՀԱԱԳ-ում կայացած երկու՝ Բնապահպանության և օրգանական գյուղատնտեսության արդի հիմնախնդիրներին և գյուղմեքենայացման հիմնախնդիրներին նվիրված 15-րդ միջազգային գիտաժողովներում, Եվրասիա միջազգային համալսարանի կողմից կազմակերպված՝ ԳԳ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին և առաջնահերթություններին նվիրված երկու գիտաժողովներում, ինչպես նաև «Ախիթար Գոշի գիտական ժամանգությունը. Պատմություն և արդիականություն» գիտաժողովում, Տերնուպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանյան մասնաճյուղում կայացած՝ ԳԳ-ում ներդրումների արդյունավետության բարձրացման հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովում, ԳՊՏԳ Եղեգնաձորի մասնաճյուղում կայացած՝ «ԳԳ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները» գիտաժողովում, Մոսկվայում կայացած Առաջին միջազգային գիտագործնական գիտաժողովում՝ նվիրված տարածաշրջանների կայուն տնտեսական ու սոցիալական զարգացման ապահովման ժամանակակից խնդիրներին, Վենետիկում կայացած՝ «Բիզնես ոլորտի առաջընթացները» գիտահետազոտական կոնֆերանսում (ABSRC 2014), ԳԳ Էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված՝ «Զբոսաշրջության զարգացման նորարարական մոտեցումներին» նվիրված սեմինար-շնորհանդեսում: Ատենախոսության մի շարք առաջարկություններ ընդունվել և

ներառվել են «Արզնի Առողջարան» ՓԲԸ-ի առաջիկա տարիների աշխատանքների կազմակերպման միջոցառումների ծրագրում:

Ատենախոսության կառուցվածքը, ծավալը և հրապարակումները:
Ատենախոսությունը շարադրվել է 156 էջի վրա, բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացությունից. օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից:

Ատենախոսության արդյունքներն արտացոլվել են հեղինակի 12 զիտական հոդվածներում:

Ներածությունում հիմնավորվել է առենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, ձևակերպվել են հիմնական գիտական արդյունքները ու նորույթը, դրանց տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և հրատարակումները:

Առենախոսության առաջին՝ «Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման տեսական հիմքերը» գլխում ներկայացված են զբոսաշրջության և առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության էությունը, առանձնահատկությունները, կազմակերպման սկզբունքները, զարգացման արդի միտումները և միջազգային փորձը:

Ըստ Ջբոսաշրջության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ զբոսաշրջիկների թիվը 2012թ. կազմել է 1.035 մլն մարդ 2011թ.-ի 980 մլն մարդու դիմաց¹: Ըստ ՋՀԿ կանխատեսումների՝ 2020թ. զբոսաշրջիկների թիվը կկազմի 1.8 մլրդ մարդ²: 2012թ. 1.035 մլն զբոսաշրջիկների 52%-ը ճամփորդել են հանգստի, ժամանցի և ռեկրեացիոն, 27%-ը՝ հարազատներին այցելության, կրոնական և բուժման, 14%-ը՝ գործնական, 7%-ը՝ այլ նպատակներով³:

Ջբոսաշրջության տեսակների մեջ իր ուրույն տեղն ունի առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը, որի հիմքում ընկած են առողջարանային-վերականգնողական ծառայությունները (որոնք տրամադրվում են հանգստացողներին կուրորտային տարածքներում տեղակայված տեղաբաշխման ընկերությունների կողմից՝ առողջարանային բուժման, վերականգնման նրանց պահանջմունքները բավարարելու նպատակով)⁴:

Մասնագիտական գրականության մեջ առկա սահմանումները⁵ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը դիտարկում են միայն հիվանդությունների բուժման, առողջության վերականգնման տեսանկյունից: Ենթող դնելով միայն բուժման վրա՝ առողջարանային զբոսաշրջությունը կարծես թե նույնաց-

¹ UNWTO Tourism Highlights, 2013 Edition, p. 3, <http://unwto.org/>

² UNWTO Tourism highlights, 2012 Edition, p. 14, <http://unwto.org/>

³ UNWTO Tourism Highlights, 2013 Edition, p. 4, <http://unwto.org/>

⁴ Л.Б. Журавлева, "Курортное дело с основами курортологии", Сочи, 2008, стр.16

⁵ А. В. Бабкин, Специальные виды туризма, учебное пособие, Ростов-на-Дону, Феникс, 2008, стр. 64; Организация туризма: Учеб. пособие / А.П.Дурович, П.И.Кабушкин, Т.М. Сергеева и др.: Под общ. ред. П.И. Кабушкина и др. — Мн.: Новое знание, 2003, стр. 31; Лойко О. Г., Туризм и гостиничное хозяйство: Учебное пособие. – Томск: Изд-во ТПУ, 2005, стр. 68; Ветитнев А.М., Курортное дело: учебное пособие /А.М. Ветитнев, Л.Б. Журавлева. -М.: КИОРУС, 2006, стр. 13; Demographic Phenomena and Demand for Health Tourism Services Correlated in Poland - Adam R. Sztromek, Malgorzata Januszewska, Piotr Romaniuk, American Journal of Tourism Management, Rosemead, Scientific & Academic Publishing, 2012, 1(1). p. 11

վում է բուժման նպատակով զբոսաշրջության հետ (ինչը սակայն ենթադրում է մշտական բնակության վայրի ժամանակավոր փոփոխություն հիվանդանոցային բուժում ստանալու համար, իսկ առողջարանային զբոսաշրջության հիմքում ընկած են առողջարանային ծառայությունները): Այստեղ անհրաժեշտ է շեշտել նաև առողջարանային հանգստի կարևորությունը, քանի որ բուժման հետ մեկտեղ մարդու առողջության վերականգնմանը նպաստում է նաև հանգիստը կուրորտային ռեսուրսների առկայության պայմաններում (բարենպաստ կլիմա, մաքուր օդ): Բացի այդ առողջարան գնում են ոչ միայն նրանք, ովքեր ունեն բուժման կարիք, այլ նաև նրանք, ովքեր ցանկանում են լիցքաթափվել, հանգստանալ, թարմանալ կուրորտային բնական ռեսուրսների առկայության պայմաններում: Առողջարանները վաղուց դադարել են միայն բուժման վայր լինելուց, և առողջարանային նոր ծառայությունների շնորհիվ (սպա, վելնես) առողջարաններն ամբողջ աշխարհում դարձել են նաև ակտիվ վերականգնողական հանգստի վայրեր: *Այս առումով առաջարկվել է առավել ամրոցակա բնորոշում, ըստ որի՝ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը զբոսաշրջության այն տեսակն է, որի հիմքում ընկած է առողջարաններ այցելությունը՝ առողջարանային բուժում և հանգիստ ստանալու նպատակով:* Այս սահմանումը ներառում է թե առողջարանային բուժման, և թե հանգստի կազմակերպումը: Այսպիսով, առողջարանային ծառայությունների փաթեթը մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել շուկայական պահանջարկի փոփոխությունները: Այս սահմանումը թույլ է տալիս ընդլայնել զբոսաշրջային ծառայությունների շուկան՝ բավարարելով պահանջմունքների ավելի լայն շրջանակ:

Աշխատանքում ներկայացվել են նաև առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության առանձնահատկությունները, զարգացման պատմությունը և արդի միտումները, ուսումնասիրվել և վերլուծվել են առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման արևելաեվրոպական և արևմտաեվրոպական երկրներին բնորոշ առանձնահատկությունները և միջազգային փորձը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության արդի վիճակը և զարգացման հիմնախնդիրները» գլխում վերլուծվել է ՀՀ-ում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության արդի վիճակը, ռեսուրսային բազան, ոլորտի կառավարման համակարգը, զարգացման միտումները և առկա հիմնախնդիրները:

ՀՀ-ում զբոսաշրջության, այդ թվում նաև առողջարանային զբոսաշրջության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Վերջինիս կազմում գործում է զբոսաշրջությունն անմիջապեսորին կարգավորող մարմինը՝ զբոսաշրջության և տարածքային տնտեսական զարգացման վարչությունը, որը մշակում և իրականացնում է զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականությունը:

Հայաստանում զբոսաշրջության ոլորտի պետական կառավարման համա-


կարգի վերլուծությունից պարզ է դարձել, որ թերի է առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտի օրենսդրական դաշտը, չկան ոլորտը կարգավորող օրենքներ, ոլորտի զարգացման ծրագրեր, իսկ եղած ծրագրերն էլ ամբողջությամբ չեն իրագործվել: Մասնավորապես՝ չկան առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության բնագավառին առնչվող, բնական բուժիչ ռեսուրսների և կուրորտների օգտագործման և կազմակերպման, առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտում ներդրումային հարաբերությունները կարգավորող համապատասխան օրենքներ, առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման ռազմավարական ծրագրեր. ԴՅ կուրորտային համալիրի զարգացման ծրագրեր, ԴՅ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման մարքեթինգային միջոցառումների ծրագիր, և այլն:

Ըստ վիճակագրական տվյալների՝ 2012թ. հունվար-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում հանրապետություն են ժամանել 843330 զբոսաշրջիկներ, 2011թ. նույն ժամանակաշրջանի 757935 զբոսաշրջիկների դիմաց, կամ աճի տեմպը կազմել է 11.3%, իսկ ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 514771 մարդ, 2011թ. 489419 մարդու դիմաց: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 806555 մարդ կամ 2011թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ ցուցանիշը աճել է 12.8%-ով⁶:

2012թ. ԴՅ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջիկների թիվը կազմել է 18032 մարդ՝ գերազանցելով նախորդ տարվա տվյալ ցուցանիշը 20%-ով (2011թ. առողջարանային զբոսաշրջիկների թիվը կազմել է 14916 մարդ), որում միջազգային զբոսաշրջիկների թիվը կազմել է 592 մարդ կամ ընդհանուրի 3.3%-ը, իսկ ներքին զբոսաշրջիկների թիվը՝ 17440 մարդ կամ 96.7% (նախորդ տարվա համապատասխանաբար 8% և 92%-ի դիմաց) (գծապատկեր 1):

Ինչպես երևում է գծապատկերից, 2008թ. առողջարանային միջազգային և ներքին զբոսաշրջիկների թիվը 2007թ. համեմատ նվազել է (ինչը թերևս կարելի է բացատրել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով), իսկ 2009թ.-ից սկսել է աճել, այնինչ 2012թ. կրկին նկատվել է միջազգային այցելուների թվի նվազում: Սրա պատճառը թերևս այն է, որ մեր առողջարանները չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին վերանորոգման և ծառայությունների մատուցման մասով, ինչը հանգեցրել է դրսից ժամանողների թվի նվազման:

⁶ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվարին», էջ 82-84, www.armstat.am



Փձապատկեր 1. Առողջարանային ներքին և միջազգային զբոսաշրջիկների թիվը, 2007-2012թթ.⁷

2012թ. ՀՀ առողջարանների եկամուտները կազմել են 1.284.148 հազար դրամ նախորդ տարվա 715.212 հազարի փոխարեն կամ եկամուտներն աճել են 79%-ով, ծախսերը կազմել են 1.043.190 հազար նախորդ տարվա 636.556 հազարի փոխարեն կամ ծախսերն աճել են 64%-ով: 2012թ. առողջարանների շահույթը կազմել է 240.958 հազար դրամ՝ 2011թ. 78.656 հազարի դիմաց, կամ աճը կազմել է 206% (2011թ. աճը կազմել է 3%, 2010թ.՝ 39%)⁸: Տվյալների բացակայության պատճառով անհնար է վերլուծել այս ցուցանիշները առանձին առողջարանների համար: ՀՀ առողջարանների գործունեության տնտեսական արդյունավետությունը (շահույթի և ծախսերի հարաբերակցությունը) 2012թ. համար կազմել է 23% (240958*100%/1043190) 2011թ.-ի 12.4%-ի դիմաց:

Ըստ ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի իրականացրած վերլուծության արդյունքների՝ ՀՀ-ում զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում 2012թ. կազմել է 336.9 մլրդ դրամ (ՀՆԱ-ի 8.2%-ը), 2011թ.-ի 308.9 մլրդ դրամի դիմաց, կամ աճը կազմել է 9.0%: Ըստ կանխատեսումների 2013թ. զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում կկազմի 361 մլրդ դրամ, 2023թ.-ին՝ 682.2 մլրդ դրամ: Զբոսաշրջության մեջ զբաղվածների թիվը 2012թ. կազմել է 86.9 հազար մարդ (ընդհանուր զբաղվածների 7.3%-ը), 2011թ.-ի 85.3 հազար մարդու դիմաց, աճը կազմել է 1.9%: Ըստ կանխատեսումների 2013թ. զբոսաշրջության մեջ զբաղվածների թիվը կկազմի 88.2 հազար մարդ⁹:

Հարկ է նշել, որ այս ցուցանիշները առանձին առողջարանային-վերականգ-

⁷ Սղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության ներքին օգտագործման փաստաթղթեր Միջազգային և ներքին զբոսաշրջություն, Ձև 1 - զբոսաշրջություն

⁸ Տե՛ս նույն տեղը

⁹ WTTC Travel & Tourism Economic Impact 2013 Armenia, p. 13
http://www.wttc.org/Site_media/uploads/downloads/armenia2013.pdf

նողական զբոսաշրջության համար չեն հաշվարկվում: Ոլորտի վիճակագրությունը բարելավման կարիք ունի, քանի որ ԱԿԾ-ի կողմից չի իրականացվում առողջարանների թվի առանձնացված հաշվառում, այլ միայն առողջատների և հանգստյան տների թվի միասնական հաշվառում (իսկ լիցենզավորված առողջարանների մասին տեղեկատվություն տրամադրել է ՀՀ ԱԼ լիցենզավորման վարչությունը), բացի այդ չի իրականացվում առողջարանային զբոսաշրջիկների թվի, առողջարանային-կուրորտային ծառայությունների ծավալի կառուցվածքի և 1 շնչի հաշվով ծառայությունների ծավալի ցուցանիշների առանձնացված հաշվարկ, այլ միայն զբոսաշրջիկների ընդհանուր թվի, հյուրանոցների և ռեստորանների ծառայությունների ծավալի կառուցվածքի, ծառայությունների ծավալը ըստ տեսակների ու 1 շնչի հաշվով ծառայությունների ծավալի ցուցանիշների հաշվարկ¹⁰:

Առողջարանային զբոսաշրջության կազմակերպման հիմքում ընկած են առողջարանային-վերականգնողական գոտիները (կուրորտները) և դրանց բնական բուժիչ ռեսուրսները: ՀՀ Առողջապահության նախարարության «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ը Հայաստանում առանձնացրել է 10 կուրորտային գոտիներ, որոնք ունեն առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ բոլոր բնական բուժիչ ռեսուրսները՝ հանքային ջրեր, բուժիչ ցեխեր, բուժիչ տորֆեր, կլիմայաբուժության կազմակերպման համար բարենպաստ կլիմայական պայմաններ: Այդ կուրորտային գոտիներն են՝ Արզնի, Դիլիջան, Հանքավան-Մարմարիկ, Բջնի-Արզական-Աղվերան, Ծաղկաձոր, Ստեփանավան-Գյուլագարակ, Սյունիք, Լոռի, Սևան, Ջերմուկ¹¹: Սակայն պետք է նշել, որ այս կուրորտային գոտիներից ոչ բոլորում կան առողջարաններ: Ներկայումս ՀՀ Առողջապահության նախարարության կողմից առողջարանային ծառայություններ մատուցելու լիցենզիա ունեն հետևյալ 13 առողջարանները՝ Ջերմուկի «Օլիմպիա», «Արարատ մոր և մանկան», «Ջերմուկ աշխարհ», «Գլաձոր», «Արմենիա», «Ջերմուկ N 1», Ծաղկաձորի «Ռիպա», Սևանի «Արևիկ», Արզնիի «Արզնի», Հանքավանի «Խոտորջուր», Արզականի «Գանձադրյուր», Դիլիջանի «Իմպուլս» առողջարանները, Վանաձորի հյուրանոցային և առողջարանային-վերականգնողական համալիրը¹²: Նշված առողջարաններից բացի գործում է նաև Դիլիջանի «Լեռնային Հայաստան» առողջարանը, որը պատկանում է ՀՀ պաշտպանության նախարարությանը:

ՀՀ կուրորտային գոտիների մանրամասն վերլուծությունից պարզ է դարձել,

¹⁰Ոլորտի վերաբերյալ ներկայացված վիճակագրական ցուցանիշները՝ կապված առողջարանային զբոսաշրջիկների թվի, առողջարանների եկամուտների, ծախսերի, շահույթի հետ, ԱԿԾ-ի կողմից չեն առանձնացվում և հրապարակվում, և նման բաժանում կատարվել է հեղինակի պաշտոնական նամակին ի պատասխան:

¹¹“Այլ առ-ևնուստ ու որոնքուհու լեզվով-օգտորտելու ռեսուրս Արմենուի”, Երևան, 2010, էր. 124-133

¹² Աղբյուրը՝ ՀՀ Առողջապահության նախարարության լիցենզավորման վարչության տրամադրած տվյալներ

որ ՀՀ-ում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր կուրորտի բնական ռեսուրսների և բուժվող հիվանդությունների յուրահատկությունները՝ այսինքն իրականացնել կուրորտների մասնագիտացում կոնկրետ մի որևէ կամ մի քանի առողջարանային բուժական գծով՝ հիմնվելով առկա ռեսուրսային ներուժի առանձնահատկությունների վրա:

ՀՀ առողջարաններում իրականացվել է մարքեթինգային սոցիոլոգիական հետազոտություն՝ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջիկների կան առողջարաններում հանգստացողների՝ առողջարան այցելելու նպատակը, առողջարանային հանգստից բավարարվածության աստիճանը պարզելու, նրանց բողոքներն ու առաջարկություններն իմանալու համար: Հետազոտությունն իրականացվել է տեղեկատվության հավաքման որակական և քանակական մեթոդներով (հարցազրույցի, դիտարկման և հարցաթերթիկային հարցման միջոցով, 2011թ.-ին, 9 առողջարանում, ընտրանքը կազմել է 267 մարդ): Հետազոտության արդյունքների վերլուծության արդյունքում առանձնացվել են այն խնդիրները, որոնք խոչընդոտում են առողջարանային զբոսաշրջության զարգացմանը՝ առողջարանային հանգստի բարձր գները, առողջարանների վերանորոգման պայմանները, սպասարկման ցածր մակարդակը և սանիտարական պայմանները առողջարաններում, բուժական ծառայությունների որակը և բժշկական անձնակազմի պատրաստվածության մակարդակը, սննդի որակը, ժամանցի քիչ հնարավորությունները առողջարաններում, բժշկական սարքավորումների հին լինելը, և այլն: Անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ նշված խնդիրների լուծման ուղղությամբ, ինչը թույլ կտա բարելավել առողջարանային հանգստի մակարդակը ՀՀ-ում և զարգացնել առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը:

Նշված հետազոտությունից բացի առողջարանային զբոսաշրջության ծառայությունների նկատմամբ եղած ներուժային գնողունակ պահանջարկի զննատման համար 2012թ. իրականացվել է էլեկտրոնային սոցիոլոգիական հարցում (հարցաթերթիկի միջոցով), որին մասնակցել է 384 մարդ: Հարցման սրբոլորները վկայում են, որ հարցվողների մեծ մասի եկամուտը ամսական կազմում է մինչև 100000 դրամ, կամ 100000-200000 դրամ, նրանց համար առողջարանային հանգստի 1 օրվա նախընտրելի արժեքը 1 անձի համար կազմել է մինչև 10000 դրամ, և ըստ հարցման մասնակիցների զգալի մասի՝ ՀՀ-ում անհրաժեշտ է կառուցել նոր առողջարաններ բոլոր կուրորտային գոտիներում՝ առավելապես 2 և 3 աստղանի: Առաջարկվել է ՀՀ-ում կառուցել առողջարաններ բոլոր կուրորտային գոտիներում, ընդ որում առավելապես միջին կարգի ու դասի, որոնցում հանգստի 1 օրվա արժեքը 1 անձի համար կկազմի մինչև 10000 դրամ, դրանով իսկ մատչելի կլինի բնակիչների զգալի մասին: Դա թույլ կտա մեծացնել առողջարանային զբոսաշրջիկների թիվը, երկարացնել առողջարանային հանգստի օրերի թիվը:

Աշխատանքում կատարվել է առողջարանների կառուցման ծախսերի հաշվարկ և որպես ոլորտի ներդրումների իրականացման աղբյուր առաջարկվել է ներդնել միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող զբոսաշրջային հարկը 1-3% դրույթաչափով օրավարձի նկատմամբ, կատարվել են համապատասխան հաշվարկներ, ինչի արդյունքում պարզվել է, որ դրա կիրառման դեպքում հնարավոր է հավաքագրել 6.2 մլրդ դրամ: Զբոսաշրջային հարկի նպատակային ու հասցեական կիրառումը կնպաստի զբոսաշրջության ոլորտում ներդրումային ծրագրերի իրականացմանը, ենթակառուցվածքների բարելավմանը և ոլորտի մի շարք խնդիրների լուծմանը:

ՀՀ-ում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով առաջարկվել է իրականացնել մարքեթինգային լայն միջոցառումներ՝ ՀՀ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջային արդյունքի առաջնդման և ամբողջ աշխարհում Հայաստանը որպես առողջարանային-վերականգնողական զբոսաշրջային երկիր ներկայացնելու նպատակով:

Ատենախոսության երրորդ՝ «Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման կառուցակարգերը» գլխում կատարվել է առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտի SWOT վերլուծություն (գծապատկեր 2), մշակվել է ոլորտի զարգացման հայեցակարգ, վերլուծվել են առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հիմնական ուղիները:

SWOT վերլուծության հիման վրա առանձնացվել են Հայաստանում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտները և այն հիմնական քայլերը, որոնք անհրաժեշտ է իրականացնել առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով.

- ✓ մշակել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտ,
- ✓ ներգրավել ներդրումներ՝ հին առողջարանների վերանորոգման և նոր առողջարանների կառուցման համար,
- ✓ քայլեր ձեռնարկել ոլորտի վիճակագրական հաշվառումը բարելավելու ուղղությամբ,
- ✓ ստեղծել առողջարանները միավորող մեկ միասնական մարմին՝ Հայաստանի առողջարանների միություն, որի միջոցով հնարավոր կլինի ներկայացնել և պաշտպանել առողջարանների շահերը, իրականացնել զարգացման ծրագրեր,
- ✓ քայլեր ձեռնարկել առողջարանային ծառայությունների գները նվազեցնելու ուղղությամբ՝ բնակչության լայն զանգվածներին այդ ծառայությունները հասանելի դարձնելու և այցելուների թիվը մեծացնելու նպատակով,
- ✓ կուրորտային հանգիստն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով շատացնել ժամանցի հնարավորությունները առողջարաններում,

	<p>Հնարավորություններ</p> <ul style="list-style-type: none"> • երկրի առողջարանային-վերականգնողական գրոսաշրջության խիթի բարձրացում • առողջարանային-վերականգնողական գրոսաշրջության զարգացման ծրագրերի մշակում և իրականացում, ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի մշակում • ներդրումների ներգրավման դեպքում հին առողջարանների վերանորոգման և լաբե-նպատակ արդյունաբերության ունեւորմանը ունեցող վայրերում նոր առողջարանների կառուցման հնարավորություն • ոլորտի մարքեթինգային գործունեության ծավալում Հայաստանում և դրսում և արդյունքում՝ կուրորտային գրոսաշրջիկների հոսքի մեծացում • առողջարանների միության ստեղծման հնարավորություն 	<p>Սպասելիքներ</p> <ul style="list-style-type: none"> • Բնակչության եկամուտների ցածր մակարդակ • մրցակցություն առողջարանների միջև • ցածր սեզոնի ժամանակ առողջարանային գրոսաշրջիկների հոսքի նվազում • ժամանցի սակավ հնարավորությունների պատճառով առողջարաններում հանգստացողների քվի հնարավոր սահմանափակում կամ նվազում • առողջարանային հասցատի բարձր գների պատճառով տեղի հայերի կողմ-նորոշվածությունը Հայաստանից դուրս հանգիստ անցկացնելուն • ենթակառուցվածքների վատ պայմանների պատճառով առողջարանային գրոսաշրջիկների հոսքի սահմանափակում (հատկա-պես ծնունդ)
<p>Ուժեղ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> • Հայաստանի 10 կուրորտային գոտիներում կուրորտային ռեսուրսների առկայություն • առողջարանային բուժման ծառայությունների լայն ցանկ • առողջարանային բուժման էֆեկտի առանձնահատկությունները • Հայաստանի դեռևս խորհրդային տարիներին առողջարանային տարածաշրջան համարվելը • ՀՀ մյլ շատ կուրորտները խանրային քրիզի որակա-կան հատկանշներով նմանությունը միջազգային հանրային քրիզին 	<p>Հաշվի առնելով Հայաստանում կուրորտային գրոսաշրջության զարգացման մեծ ներուժը, կուրորտային գոտիներում բոլոր կուրորտային ռեսուրսների առկայությունը, առողջարանային բուժման ծառայությունների լայն ցանկն ու դրանց դրական ազդեցությունը՝ մշակել առողջարանային-վերականգնողական գրոսաշրջության զարգացման ծրագրեր, ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտ, բաշխել ձեռնարկել կուրորտներում նոր առողջարանների կառուցման գործող ինչ առողջարանների վերանորոգման նպատակով ներդրումների ներգրավման, երկրի առողջարանային-վերականգնողական գրոսաշրջության խիթի բարձրացման և կուրորտային գրոսաշրջիկների հոսքի մեծացման նպատակով մարքեթինգային գործունեության ծավալման և առողջարանների միության ստեղծման ուղղությամբ</p>	<p>Հաշվի առնելով Հայաստանի դեռևս խորհրդային տարիներին առողջարանային տարածաշրջան համարվելը և Ձերտուլի հանրային քրի և Նելսոնյան Կարոլի Կարյայի իրոժեյ քրի լադարիցների նույնու-թյունը, կարելի է սակ. որ ոլորտի զարգացման միջազգային փորձի ներդրման և կառավարման արդյունքում տեղի առողջարանները կարող են մրցակցել միջազգային լավագույն առողջարանների հետ՝ զրափելով միջազգային գրոսաշրջիկ-ների:</p>
<p>Ձուլ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> • առողջարանների քիչ քիվ և Հայաստանի 10 կուրորտային գոտիներից ոչ բոլորում առողջարաններ լինելը • ցածր սեզոնին առողջարանների թերթևակածություն և որոշ առողջարանների գործունեությունը միայն ամռան ամիսներին • ներդրումների անբավարարություն հին առողջարանների վերանորոգման և նոր առողջարանների կառուցման համար • ոլորտը կարգավորող քրի օրենսդրական դաշտ, ոլորտի թերթի փնտապարանային հաշվառում • առողջարանները միավորող մեկ միասնական մարմնի բացակայություն • երկրի որպես կուրորտային տարածաշրջանի վատ ներկայացվածությունը աշխարհում • առողջարանային ծառայությունների բարձր գներ • այնպիսիների քիչ քիվ և դրանց մեջ օտարերկրյա գրոսաշրջիկների քիչ մասնաբաժինը 	<p>Առողջարանների միության ստեղծման միջոցով կարգավորել ոլորտի մարքեթինգային, վիճակագրական հաշվառման գործունեությունը, ինչ առողջարանների վերանորոգման և նորների կառուցման շնորհիվ նվազեցնել առողջարանային ծառայությունների գները՝ երկրի բնակչության լայն զանգվածներին առողջարանային հաճելի ստանդարտներով դարձնելու և ներքին ու ներգրոսաշրջության առողջարանային գրոսաշրջիկների քիվ մեծացնելու ու առողջարանների թերթևակածության խնդիրը լուծելու խանար</p>	<p>Բայելը ձեռնարկել առողջարաններում ժամանակի հնարավորությունները ընդայն-ու, ենթակառուցվածքների զարգացման ու դրա արդյունքում միջազգային գրոսաշրջիկների հոսքը դեպի Հայաստանի առողջարանները մեծացնելու ուղղությամբ</p>

Գծապատկեր 2. Առողջարանային-վերականգնողական գրոսաշրջության ոլորտի վերլուծության SWOT մատրիցա

- ✓ իրականացնել մարքեթինգային միջոցառումներ՝ Հայաստանի առողջարանները միջազգային շուկաներում ներկայացնելու և առողջարանային-վերականգնողական զբոսաշրջիկների հոսքը մեծացնելու նպատակով,
- ✓ մշակել և իրականացնել առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման ծրագրեր,
- ✓ քայլեր ձեռնարկել ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ,
- ✓ քայլեր ձեռնարկել զբոսաշրջային գործակալությունների կողմից առողջարանային ուղեգրերի վաճառքի ծավալների մեծացման ուղղությամբ,
- ✓ մշակել առանձին կուրորտային գոտիների և Հայաստանի կուրորտային համալիրի զարգացման ռազմավարական ծրագրեր,
- ✓ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով ուսումնասիրել և ներդնել ոլորտի կառավարման միջազգային լավագույն փորձը:

SWOT վերլուծության արդյունքում մշակվել է ոլորտի զարգացման հայեցակարգ, որի հիմնական նպատակը մրցունակ կուրորտային համալիրի ձևավորման և առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար պայմանների ձևավորումն է:

Հայեցակարգում առանձնացվել են առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հիմնական խնդիրները (ՀՀ կուրորտային զբոսաշրջության արդյունքի ներկայացում միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում, առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության վիճակագրական հաշվառման գործընթացի և օրենսդրական դաշտի բարելավում, առողջարանային հանգստի ծառայությունների մրցունակության բարձրացում գին և որակ ցուցանիշների բարելավմամբ, գործարար, ներդրումային միջավայրի բարելավում, ոլորտի զարգացման գիտական ապահովում) և առաջարկվել են դրանց լուծման հիմնական միջոցառումները:

Հայեցակարգի իրականացումը կնպաստի կուրորտային ենթակառուցվածքի զարգացմանը, առողջարանային ծառայությունների որակի և կուրորտային համալիրի մրցունակության բարձրացմանը:

Հայեցակարգից բացի առաջարկվել է նաև մշակել ոլորտի օրենսդրական դաշտը՝ հետևյալ երեք հիմնական օրենքներով՝ «Բնական բուժիչ ռեսուրսների և առողջարանային-վերականգնողական գոտիների մասին» ՀՀ օրենք, «Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության մասին» ՀՀ օրենք, «Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտում ներդրումային գործունեության մասին» ՀՀ օրենք: Նշված օրենքների ընդունումը թույլ կտա առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացումը դնել բարձր հիմքերի վրա՝ օրենսդրորեն ամրագրելով ոլորտի մի շարք հարցեր ու հարաբերություններ:

Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հա-

մար կարևոր նշանակություն ունի նաև ոլորտի գիտական կադրերի պատրաստումը, այդ իսկ պատճառով առաջարկվել է բուհերում պատրաստել կուրորտային զբոսաշրջության ոլորտի մասնագետներ, ովքեր կտիրապետեն զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ խորը գիտելիքների, գործնական հմտությունների: «Կուրորտային զբոսաշրջություն» մասնագիտության ներդրումը բուհերում կնպաստի կուրորտային համալիրի և առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացմանը:

Հայաստանի առողջարանները, անկախ սեփականության ձևից, հանդես են գալիս որպես մեկ միասնական սանատոր-կուրորտային համալիր, ինչը պահանջում է կառավարման և վերահսկողության կազմակերպամեթոդական ապահովում՝ համալիրի զարգացման համար: Խորհրդային տարիներին գործել է կուրորտային վարչություն, որը համակարգել է առողջարանները, զբաղվել դրանց զարգացման, կատարելագործման, նյութական բազայի նորացման, գովազդի, միջազգային նորագույն փորձի ներդրման և այլ հարցերով: Սակայն նորանկախ Հայաստանի պայմաններում, երբ պլանային համակարգը փոխարինվեց շուկայական տնտեսակարգով, շատ կառույցներ, այդ թվում նաև կուրորտային վարչությունը կորցրեցին իրենց նախկին դերն ու նշանակությունը և դուրս մղվեցին ասպարեզից: Այդ պատճառով շատ ոլորտների, այդ թվում նաև առողջարանային զբոսաշրջության ոլորտի զարգացումը անուշադրության մատնվեց: Ահա թե ինչու առաջարկվել է ստեղծել մի մարմին՝ «Հայաստանի առողջարանների միությունը»՝ որպես իրավաբանական անձանց միություն, որը կհամակարգի և կներկայացնի առողջարանների շահերը, կմշակի դրանց հեռանկարային զարգացման ծրագրեր, կնպաստի առողջարանների գործունեության մեջ կառավարչական նոր տեխնոլոգիաների ներդրմանը, առողջարանային զբոսաշրջության զարգացմանը միջազգային մակարդակին համապատասխան (ինչը նախկինում մասամբ իրականացրել է կուրորտային վարչությունը):

Միության առաքելությունը պետք է լինի՝ միջազգային ժամանակակից պահանջներին համապատասխան առողջարանային-վերականգնողական ծառայությունների բարձր որակի և մատուցման ապահովմանը, ներքին ու արտաքին շուկաներում առողջարանների մրցունակության բարձրացմանը, առողջարանների միջև կապերի ամրապնդմանն աջակցելը:

Միությունը պետք է ծառայի հետևյալ հիմնական նպատակների իրականացմանը.

- միջազգային առաջատար փորձի ուսումնասիրման և ներդրման արդյունքում նպաստել առողջարանների զարգացմանը ազգային և միջազգային կտրվածքով,
- նպաստել առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացմանը,
- կատարելագործել ոլորտի մասնագետների մասնագիտական հմտություն-

ները,

- ապահովել ոլորտի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը,
- իրականացնել ոլորտի զարգացման մարքեթինգային գործունեությունը,
- նպաստել առողջարանային ծառայությունների որակի բարձրացմանը:

Մշակվել է նաև միության կառավարման համակարգը, կառավարման մարմինների լիազորությունները և գործառույթները:

Ատենախոսությամբ «Եզրակացություն» բաժնուն ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և կարևոր եզրահանգումները:

- ❖ Զբոսաշրջությունը համարվում է տնտեսության արագ և առավել արդյունավետորեն զարգացող ճյուղ ամբողջ աշխարհում: ԴՅ-ում այն սահմանվել է տնտեսության գերակա ոլորտ: Սակայն մասնագիտական գրականության մեջ առկա սահմանումները զբոսաշրջության վերաբերյալ թույլ չեն տալիս բացահայտել դրա էությունն ամբողջությամբ: Ելնելով վերը նշվածից՝ առաջարկվել է զբոսաշրջության առավել ընդգրկուն բնորոշում՝ որը հաշվի է առնում զբոսաշրջությունը և որպես գործունեության տեսակ, և որպես ծառայության տեսակ՝ կապված զբոսաշրջիկների՝ ճամփորդության ընթացքում առաջացած պահանջմունքների բավարարման հետ:
- ❖ Զբոսաշրջության հիմնական տեսակներից է առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը, որը կապված է մարդկանց առողջարանային բուժման, վերականգնման և հանգստի հետ: Սասնագիտական գրականության մեջ առկա սահմանումները առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը ներկայացնում են միայն հիվանդությունների բուժման տեսանկյունից՝ հաշվի չառնելով առողջարանային հանգիստն ու դրա առանձնահատկությունները: Այս առումով առաջարկվել է առավել ամբողջական բնորոշում, որը ներառում է թե առողջարանային բուժման, և թե հանգստի կազմակերպումը:
- ❖ Արևելաեվրոպական և արևմտաեվրոպական երկրներում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման առանձնահատկությունների վերլուծությունից պարզ է դառնում, որ Արևմտյան Եվրոպայի երկրներում առողջարանային զբոսաշրջությունը զարգանում է՝ շնորհիվ բժշկական սպասարկման բարձր որակի և սոցիալական ապահովագրության համակարգի առկայության, իսկ Արևելյան Եվրոպայում, 1990-ական թվականներին տեղի ունեցած փոփոխություններից հետո այս ոլորտում կատարվեցին նորամուծություններ մի շարք ուղղություններով՝ ապրանքային, տեխնոլոգիական, կազմակերպական, շուկայական, կառավարչական: Առաջարկվել է կարևորվել է ԴՅ-ում ևս այս ոլորտում նշված նորամուծությունների կիրառումը:
- ❖ Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման միջազգային փորձի վերլուծությունից երևում է, որ առողջարանային-վերա-

կանգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով տարբեր երկրներ իրականացնում են միջոցառումներ մի շարք ուղղություններով՝ մարքեթինգային գործունեություն պետական և առանձին առողջարանների մակարդակով, ոլորտի իրավական կարգավորում և կառավարում, ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում և իրականացում, առողջարանային ծառայությունների ընդլայնում և սպասարկման որակի բարձրացում, ոլորտի կառավարման կադրերի պատրաստում, գնային զեղչերի քաղաքականություն, և այլն: Առաջարկվել և կարևորվել է ԴՀ-ում ևս առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման նպատակով մի շարք ուղղություններով բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը:

- ❖ Դայաստանում կան 10 կուրորտային գոտիներ, որոնք ունեն առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ բոլոր բնական բուժիչ ռեսուրսները՝ հանքային ջրեր, բուժիչ ցեխեր, տորֆ, կլիմայաբուժության կազմակերպման համար նպաստավոր պայմաններ: Չնայած այս ամենին՝ ԴՀ կուրորտային ներուժն օգտագործվում է ոչ ռացիոնալ: Այս առումով առաջարկվել է ընդունել «Բնական բուժիչ ռեսուրսների և առողջարանային-վերականգնողական գոտիների մասին» ԴՀ օրենք, որով կկարգավորվեն ԴՀ բնական բուժիչ ռեսուրսների և կուրորտների օգտագործման, կազմակերպման և պահպանման ոլորտում առաջացող հարաբերությունները, կսահմանվեն ոլորտի կարգավորման պետական քաղաքականության սկզբունքները, կառավարության, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, և այլն:
- ❖ Չնայած առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման առկա ներուժին՝ ոչ բոլոր կուրորտային գոտիներում կան առողջարաններ: ԴՀ-ում գործում է ընդամենը 14 առողջարան, որոնց մեծ մասը գտնվում է ոչ բարվոք վիճակում, դրանցից մի քանիսն է վերանորոգվել միջազգային ստանդարտներին համապատասխան: Ակնհայտ է, որ ԴՀ-ում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը միջազգային մակարդակին համապատասխան զարգացնելու նպատակով անհրաժեշտ է կառուցել նոր առողջարաններ, վերանորոգել գործող առողջարանները, ինչի համար անհրաժեշտ է ձևավորել բարենպաստ ներդրումային միջավայր: Այդ նպատակով առաջարկվել է ընդունել «Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտում ներդրումային գործունեության մասին» ԴՀ օրենքը, որով կսահմանվեն ոլորտի ներդրումային գործունեության հիմնական սկզբունքները, ներդրումների իրականացման համար տրվող արտոնությունները, ոլորտի ներդրումային հարաբերությունների կարգավորումը, և այլն: Մինևույն ժամանակ կատարվել է հաշ-

վարկ՝ առողջարանների կառուցման համար անհրաժեշտ ներդրումների ծավալի վերաբերյալ, և որպես ոլորտում ներդրումների կատարման աղբյուր առաջարկվել է ներդնել միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող զբոսաշրջային հարկը:

- ❖ Հաշվի առնելով ոլորտի թերի օրենսդրական դաշտը՝ բացի վերը նշված օրենքներից առաջարկվել է ընդունել նաև «Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության մասին» ՀՀ օրենք, որով կկարգավորվեն ՀՀ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության բնագավառին առնչվող հարաբերությունները, կսահմանվեն ոլորտի հիմնական հասկացությունները, առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, հիմնական միջոցառումները, և այլն. ինչպես նաև մշակել ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրեր:
- ❖ ՀՀ-ում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը առողջարանային հանգստի բարձր գներն են, ինչի արդյունքում առողջարանային հանգիստն անհասանելի է միջին և ավելի ցածր եկամուտներ ունեցողների համար: Այս առումով գնային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից մշակվել և առաջարկվել է առողջարանային երկարատև հանգիստը խթանող գների ճկուն գեղչային համակարգ, կատարվել են համապատասխան հաշվարկներ:
- ❖ Շուկայական տնտեսության պայմաններում ցանկացած կազմակերպության առաջնային խնդիրներից մեկը մարքեթինգային գործունեության իրականացումն է՝ մրցակցային միջավայրում հաղթելու նպատակով: Իրականացված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ առողջարաններում չկա մարքեթինգի գծով առանձնացված ստորաբաժանում, կամ մարքեթինգի մասնագետ: Հաշվի առնելով մարքեթինգային գործունեության կարևոր դերը առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման գործում՝ կարևորվել է առողջարաններում մարքեթինգային գործունեության իրականացումը՝ համապատասխան ստորաբաժանման կամ մասնագետի կողմից, նշվել են մարքեթինգային գործունեության անհրաժեշտ քայլերը և միջոցառումները:
- ❖ ՀՀ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտի SWOT վերլուծության արդյունքների հիման վրա մշակվել է առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, որտեղ նշվել են ոլորտի զարգացման նպատակները, խնդիրները և անհրաժեշտ միջոցառումները:
- ❖ Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման առումով կարևորվում է ոլորտի գիտական ապահովումը: Այս առումով առա-

ջարկվել է բուհերում բացել «Կուրորտային զբոսաշրջություն» մասնագիտություն, ինչը թույլ կտա պատրաստել կուրորտային զբոսաշրջության ոլորտի, այդ թվում նաև կառավարման մասնագետներ:

- ❖ Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման կազմակերպամեթոդական ապահովման համար առաջարկվել է ձևավորել «Հայաստանի առողջարանների միություն» ոչ առևտրային կազմակերպությունը, որը կզբաղվի դրանց զարգացման ծրագրերի նշակմամբ, կներկայացնի ու կպաշտպանի առողջարանների շահերը պետական կառավարման և այլ մարմիններում, կհամագործակցի այլ կազմակերպությունների հետ, կիրականացնի ՀՀ-ում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացմանը նպաստող մի շարք գործառույթներ, իր ինտերնետային կայքում կներկայացնի ամբողջական տեղեկատվություն ՀՀ կուրորտների, առողջարանների, դրանց գների և այլ պայմանների վերաբերյալ (ՀՀ-ն որպես կուրորտային զբոսաշրջության երկիր տարածաշրջանային և միջազգային ասպարեզում ներկայացնելու համար), կնպաստի ոլորտի վիճակագրական հաշվառման իրականացմանը, և այլն:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Թովմասյան Գ.Ռ., «Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության էությունը և զարգացման արդի միտումները», Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա, N 7, Երևան 2011թ., էջ 49-51
2. Թովմասյան Գ.Ռ., «ՀՀ առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման մարքեթինգային հիմնահարցերը», Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա, N 4, Երևան 2012թ., էջ 18-21
3. Թովմասյան Գ.Ռ., «ՀՀ առողջարանային-վերականգնողական գոտիները և առողջարանները», Ազրոգիտություն ամսագիր, N 3-4, Երևան 2012թ., էջ 260-265
4. Թովմասյան Գ.Ռ., «Զբոսաշրջության ոլորտի կառավարման համակարգը Հայաստանում և աշխարհի մի շարք երկրներում», Материалы международной научной конференции "Современные проблемы экологического и органического сельского хозяйства", I АУА, Երևան 2012, с.р. 104-110
5. Թովմասյան Գ.Ռ., «Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները» գիտաժողովի նյութերի ժողովածու, Եվրասիա միջազգային համալսարան, Երևան 2012թ., էջ 42-51
6. Tovmasyan G.R., "Price analysis in spa-resort tourism sphere", Известия национальной академии наук Республики Армения, N 3, Երևան 2012, с.р. 122-125

7. Товмасыан Г.Р., “SWOT analysis of spa-resort tourism development in Armenia”, Материалы I международной научно-практической конференции “Актуальные проблемы обеспечения устойчивого экономического и социального развития регионов” / НИЦ «АПРОБАЦИЯ». Москва, 2012, стр. 23-27
8. Թովմասյան Գ.Ռ., «Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման արելեվելոպական և արևմտաեվրոպական մոդելները», Հանրային կառավարման հիմնախնդիրներ, Պրակ Ա. (ՀՊՏՀ), Երևան 2013թ., էջ 288-302
9. Թովմասյան Գ.Ռ., «Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության կառավարման համակարգը և զարգացման հայեցակարգային հիմքերը ՀՀ-ում», Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, N 3, Երևան 2013թ., էջ 86-97
10. Թովմասյան Գ.Ռ., «ՀՀ առողջարանների միության ձևավորման անհրաժեշտությունը որպես առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման կարևոր գործոն», Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա, N 11-12, Երևան 2013թ., էջ, 85-88
11. Թովմասյան Գ.Ռ., «Պահանջարկի և առաջարկի վերլուծությունը առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները» գիտաժողովի նյութերի ժողովածու, Գիրք 2, Եվրասիա միջազգային համալսարան, Երևան 2013թ., էջ 243-250
12. Товмасын Г.Р., “Применение туристического палата как источника инвестиций для развития санаторно-курортного туризма в Республике Армения”, Научно-практический журнал “Проблемы экономики и менеджмента”, N 4 (32). 2014, г. Ижевск, стр. 66-68

**ОСНОВНЫЕ ПУТИ РАЗВИТИЯ САНАТОРНО-КУРОРТНОГО ТУРИЗМА
В РА**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 — "Экономика, управление хозяйством и его сферами".

Защита диссертации состоится 27-го ноября 2014 г., в 14⁰⁰ часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

Р Е З Ю М Е

Санаторно-курортный туризм - один из основных и особенно популярных видов туризма, имеющего тенденцию быстрого развития во всем мире. Цель санаторно-курортного туризма - восстановление жизненных сил человека, для чего они посещают санатории.

Республика Армения имеет большой потенциал в организации и развития санаторно-курортного туризма. В РА знаменательны 10 курортных зон, которые обладают благоприятными природными лечебно-оздоровительными ресурсами: минеральные воды, лечебные грязи, торф, хорошие условия для климатолечения. Курорты Армении со своими курортными ресурсами могут стать международно известными курортными зонами, так как их ресурсы сравнимы с известными международными курортными ресурсами Карловых Вар, Железноводска, Пятигорска, Виши и т.д.

Еще в советские времена Армения была курортным центром региона. Но в последние годы число туристов уменьшилось, санатории действуют не полной мощностью, не все санатории находятся в хорошем состоянии, не во всех курортах есть санатории. Также следует отметить неполноценность законодательной базы, статистического учета и маркетинговой деятельности, отсутствие мотивации для инвестиций, отсутствие концепции и программы развития сферы и научных исследований по развитию сферы санаторно-курортного туризма.

Вышеуказанными положениями обуславливается актуальность и значимость темы диссертации.

Цель диссертации — на основе системного анализа современных проблем сферы санаторно-курортного туризма в РА разработать необходимые теоретические, практические и концептуальные основы для его развития.

Для достижения указанной цели в диссертации были поставлены следующие задачи:

- Изучить теоретико-методические основы и механизмы развития туризма и санаторно-курортного туризма.
- Исследовать современные тенденции и особенности развития санаторно-курортного туризма в международной практике,
- оценить потенциальные возможности развития санаторно-курортного туризма в РА.
- проанализировать законодательную базу регулирующую сферу санаторно-курортного туризма для выявления путей улучшения.
- выявить основные источники и пути инвестирования в сфере санаторно-курортного туризма.
- проанализировать эффективность ценовой политики санаторно-курортного отдыха,
- выявить основные пути осуществления маркетинговой деятельности для развития санаторно-курортного туризма.

Из основных результатов диссертационного исследования научная новизна заключается в следующем:

1. В результате анализа научно-методической базы и современных тенденций и особенностей развития санаторно-курортного туризма, дано новое, более широкое определение санаторно-курортного туризма, при котором он наблюдается с точки зрения предоставления услуг организации санаторного лечения и отдыха, что позволяет расширять рынок туристических услуг, удовлетворяя более широкий круг потребностей.
2. На основе результатов проведенного SWOT анализа сферы санаторно-курортного туризма в РА разработана и предлагается концепция развития санаторно-курортного туризма, как научно-обоснованная комплексная программа более перспективных направлений и приоритетов формирования конкурентоспособного курортного комплекса и развития санаторно-курортного туризма.
3. Для организационно-методического обеспечения развития санаторно-курортного туризма предложено и обосновано формирование «Ассоциации Армянских санаторий» некоммерческой организации, разработаны основные цели, функции, механизм финансирования и система управления.
4. Разработаны и обоснованы основные законодательные подходы регулирующие сферу санаторно-курортного туризма в РА, направленные на принятие законов о туристическом налоге, о природных лечебных ресурсах и курортных зонах, о санаторно-курортном туризме и о инвестиционной деятельности в этой сфере, разработаны их основные положения.

**THE MAIN WAYS OF SPA-RESORT TOURISM DEVELOPMENT IN THE
RA**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.02 — “Economics. Management of the Economy and its Spheres”.

The defense of the thesis will take place on November 27, 2014, at 14⁰⁰ o'clock at the session of the 014 Specialized Council of Economics of the SCC of RA functioning at Armenian state university of economics located at 0025, Yerevan, Nalbandyan str. 128.

A B S T R A C T

Spa-resort tourism is one of the main and popular types of tourism which develops very fast throughout the world. Its aim is to recover the vital forces of a human body, for which people visit sanatoriums.

The Republic of Armenia has a great potential for the organization and development of spa-resort tourism. There are 10 resorts in Armenia all of which have natural curable resort resources: mineral water, curable mud, turf, good conditions for climate therapy. Armenian resorts may become internationally known resort zones with their resort resources, as their resources are compared with internationally known resort resources of Karlovy Vary, Zheleznovodsk, Pyatigorsk, Vichy, etc.

Armenia was known as a regional resort centre during the Soviet time. But recently the number of tourists has decreased, sanatoriums do not function at full capacity, not all sanatoriums are in good conditions and there are not sanatoriums in all resort centers. Besides the legislation, statistics and marketing activity of the sphere are imperfect, there are no motives for investments, there are no programs and concepts for the development, there are not also any scientific researches for the development of the sphere.

The urgency and importance of the subject of the thesis are stipulated by the aforementioned problems.

The thesis is aimed at developing necessary theoretic, practical and conceptual basis for the development of spa-resort tourism in RA on the basis of systemic analysis of the modern problems of the sphere.


In order to reach this aim, the following objectives are suggested:

- To study theoretical-methodical basis and mechanisms of tourism and spa-resort tourism development,
- To explore the modern tendencies and peculiarities of spa-resort tourism development in the international practice,
- To evaluate the potential possibilities of spa-resort tourism development in RA,

- To analyze the legislation basis of regulation of spa-resort tourism sphere in order to find out the ways for improvement,
- To discover the main sources and ways of investing in spa-resort tourism sphere,
- To analyze the effectiveness of price policy of spa-resort rest,
- To discover the main ways of marketing activity implementation for spa-resort tourism development.

The main scientific results and the novelty of dissertation are as follows:

1. As a result of analysis of the methodology and the modern tendencies and features of development of spa-resort tourism, a new and wider definition of “spa-resort tourism” is offered, which considers it from the point of view of providing services of treatment and rest organization, which lets expand the market of tourism services satisfying wider range of needs.
2. On the basis of the results of SWOT analysis of spa-resort tourism sphere in RA the concept of spa-resort tourism development is elaborated and offered as a scientifically proved complex program of the most prospective directions and priorities for the formation of a competitive resort complex and for the development of spa-resort tourism.
3. For organizational and methodical support of spa-resort tourism development the formation of “Armenian sanatorium association” noncommercial organization, its main goals, functions, financing mechanisms and management system are offered, proved and elaborated.
4. The principal legislative approaches of regulation of spa-resort tourism sphere in RA were elaborated and proved which are the adoption of laws about tourism tax, natural resort resources and resort zones, spa-resort tourism and investment activities in this sphere, their main points are processed.

A handwritten signature in black ink, appearing to be 'R. Ghaf' or similar, written in a cursive style.